ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 18 >> փետրվարի 2019թ. N 206-Հ

ՀՐԱՄԱՆ

<<ՓԻ-ԷՅՉ-ՓԻ ԱՈՒԴԻՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՏՐՎԱԾ ԱԾ N 070 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Աուդիտորական գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով և նույն հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով աուդիտորական ծառայությունների իրականացման և ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզավորող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 15-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը և <<ՓԻ-ԷՅՉ-ՓԻ ԱՈՒԴԻՏ>> փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի փետրվարի 01-ի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <<ՓԻ-ԷՅՉ-ՓԻ ԱՈՒԴԻՏ>> փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 01566631, այսուհետ՝ ՓԲԸ) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2009 թվականի նոյեմբերի 20-ին տրված աուդիտորական ծառայությունների իրականացման թիվ ԱԾ N 070 լիցենզիայի գործողությունը սույն թվականի հունվարի 31-ից համարել կասեցված՝ մինչև համապատասխան խախտումը վերացնելու

վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերը լիազորված մարմին ներկայացնելու օրվան հաջորդող օրը:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ